ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ
2019 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2020
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....3
ԲԱԺԻՆ 1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի
2019 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը.....4

ԲԱԺԻՆ 2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային
ծրագրի կատարման ցուցանիշները և ձևավորման աղբյուրները.....6
2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները.....6
2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները.....8

ԲԱԺԻՆ 3. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային
գործունեության մոնիթորինգի արդյունքները.....9
3.1. Պատվարների ամրապնդման նախագծային աշխատանքների նախապատրաստում ու տվյալների հավաքագրում, վերջնական նախագծային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմում ..9
3.2. Հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցում և արդիականացում, պատվարներում մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրում.....9
3.3. Շրջակա միջավայրի պահպանության, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ոլորտի գործառույթների բարելավում 10
3.4. Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքեր տեղադրում12
3.5. Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ.....12
ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման
ենթակա ներդրումների ծավալը 15
4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված
ներդրումների ծավալը 15
4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 16

Եզրակացություններ.....18

Հղումներ օգտագործված նյութերին.....19

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2020 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև ընկերություն) 2019 թվականի ներդրումային ծրագրի [Որոշում 2] (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագիրը և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող հիդրոէլեկտրակայանների պատվարների նախագծային աշխատանքների և տվյալների հավաքագրման, պատվարների մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրման, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման, հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման նպատակով համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների, անվտանգության պարագաների, հատուկ մեքենաների ձեռքբերման, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների իրականացման ենթաուղղությամբ՝ Գորիս քաղաքի գրասենյակի և Տաթև ՕԿՋ-ի համար խմելու ջրի ջրագծի նախագծման, «Շամբ ՀԷԿ»-ի շենքի, «Սպանդարյան ՀԷԿ»-ի պահակակետերի հիմնանորոգման, Անգեղակոթ ջրավազանի պարապ ջրթափի երեսպատման, «Սպանդարյան ՀԷԿ»-ի ճնշումային խողովակաշարի, գնդային փականի հիմնանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացման ուղղությամբ:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականների ներդրումային ծրագրերով նախատեսված էր իրականացնել 2 659,6[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- պատվարների ամրապնդման նախագծային աշխատանքների նախապատրաստում ու տվյալների հավաքագրում, վերջնական

[1] Սույն վերլուծական տեղեկանքում բոլոր գումարները ներկայացված են առանց ԱԱՀ:

նախագծային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմում՝ 362,8 մլն դրամ,

- հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցում և արդիականացում, պատվարների մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրում՝ 389,3 մլն դրամ,
- շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավվում՝ 1 105,0 մլն դրամ,
- հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրում՝ 200,9 մլն դրամ:
- շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 601,6 մլն դրամ,

Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների ներկայացված է Գրաֆիկ 1-ում:

Գրաֆիկ 1



ԲԱԺԻՆ 2.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ ընկերությունը 2019 թվականի ընթացքում իրականացրել է 1 109,4 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 349,6 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 759,8 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ Աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2019թ.	2019թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Պատվարների ամրապնդման նախագծային աշխատանքների նախապատրաստում ու տվյալների հավաքագրում, վերջնական նախագծային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմում	362,8	-	-	161,4	-	161,4
2	Հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցում և արդիականացում, պատվարների մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրում	389,3	15,2	4%	50,1	-	50,1
3	Շրջակա միջավայրի պահպանության, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ոլորտի գործառույթների բարելավում	1 105,0	63,1	6%	203,2	214,7	417,9
4	Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրում	200,9	-	-	99,4	101,0	200,4
5	Հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	601,6	271,3	45%	279,7	-	279,7
	Ընդամենը	2 659,6	349,6	13%	793,7	315,7	1 109,4

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, ընկերությունը 2019 թվականի ներդրումային ծրագիրը կատարել է 13%-ով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ Աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	315,7	28%	28,0	8%
2	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	76,1	7%	76,1	22%
3	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	566,8	51%	102,0	29%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	150,9	14%	143,5	41%
4,1	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	142,1	-	142,1	-
4.2	*նախագծային աշխատանքներ*	8,8	-	1,5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	1 109,4		349,6	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, Ընկերության կողմից 2019 թվականին ավարտված աշխատանքների զգալի մասն իրականացվել է կապալառու կազմակերպությունների կողմից:

ԲԱԺԻՆ 3.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև ներկայացված է ընկերության կողմից 2019 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1 Պատվարների ամրապնդման նախագծային աշխատանքների նախապատրաստում ու տվյալների հավաքագրում, վերջնական նախագծային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմում

«Պատվարների ամրապնդման նախագծային աշխատանքների նախապատրաստման ու տվյալների հավաքագրման, վերջնական նախագծային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմման» ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 362,8 մլն դրամ՝ լրացուցիչ երկրաֆիզիկական փորձարկումների, սեյսմիկ վտանգների և պատվարի անվտանգության մանրամասն վերլուծության, պատվարի վերականգնման պլանի տեխնիկատնտեսական և ամրապնդմանն ուղղված ուսումնասիրության, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի կազմման նպատակով: Նշված ուղղությամբ իրականացվել են 161,3 մլն դրամ, որոնք մնացել են անավարտ:

3.2 Հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցում և արդիականացում, պատվարների մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրում

Հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցման և արդիականացման, պատվարների մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրման ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 389,3 մլն դրամ՝ «Տաթև ՀԷԿ»-ի և «Շամբ ՀԷԿ»-ի ագրեգատների գեներատորային կիսահարկերի և

տուրբինային հարկի վերականգնման, «Սպանդարյան ՀԷԿ»-ի և «Շամբ ՀԷԿ»-ի տուրբինային հարկի պատերից գրունտային ջրերի ֆիլտրացիոն հոսքերի նվազեցման, պատվարների մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրման և Անգեղակոթի պատվարում սիֆոնային ջրհեռի մոնտաժման աշխատանքների նպատակով:

«Հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 145,1 մլն դրամ: Հաշվետվության համաձայն այս ուղղությամբ իրականացվել են 33,9 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են «Տաթև ՀԷԿ»-ի և «Շամբ ՀԷԿ»-ի ագրեգատների գեներատորային կիսահարկերի և տուրբինային հարկի վերականգնման աշխատանքներին: Նշված աշխատանքները մնացել են անավարտ:

«Անգեղակոթի պատվարում սիֆոնային ջրհեռի մոնտաժում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 15,0 մլն դրամ: Այս ուղղությամբ իրականացվել և ավարտին են հասցվել են 15,2 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են Անգեղակոթի պատվարում սիֆոնային ջրհեռի նախագծային և մոնտաժման աշխատանքներն:

3.3 Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավում

Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 1 105,0 մլն դրամ՝ կոյուղաջրերի մաքրման տեղային կայանների ստեղծման, բնապահպանական հետազոտությունների և մշտադիտարկումների, վտանգավոր թափոնների պահպանման և հեռացման, ջրաչափական կետերում չափիչ սարքերի նախագծային և տեղադրման ախատանքների, ՀԷԿ-երում հրդեհային ազդանշանային և հրդեհաշիջման համակարգերի կառուցման, ջրային միջավայրի ելակետային ուսումնասիրության նպատակով:

«Կոյուղաջրերի մաքրման տեղային կայանների ստեղծում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 30,8 մլն դրամ: Հաշվետվության համաձայն այս ուղղությամբ շահագործման են հանձնվել 63,1 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են «Տաթև», «Շամբ» և «Սպանդարյան» ՀԷԿ-երի կոյուղաջրերի մաքրման կայանների նախագծային և ստեղծման աշխատանքներին:

«Բնապահպանական հետազոտություններ, մշտադիտարկումներ» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 51,7 մլն դրամ: Այս ուղղությամբ իրականացվել են 44,8 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են Որոտան գետի ջրավազանի կենսաբազմազանության հետազոտությանը: Նշված աշխատանքները մնացել են անավարտ:

«Վտանգավոր թափոնների պահպանում, հեռացում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 112,6 մլն դրամ: Հաշվետվության համաձայն այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 285,9 մլն դրամ ներդրումներ, որոնք հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ անավարտ են: Այս աշխատանքները ներառում են ասբեստ պարունակող նյութերի վնասազերծման, փոխադրման և մշտական պահեստավորման աշխատանքներ:

«ՀԷԿ-երում հրդեհային ազդանշանային և հրդեհաշիջման համակարգերի կառուցում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 529,3 մլն դրամ: Հաշվետվության ուսումնասիրության համաձայն այս ուղղությամբ իրականացվել են 15,6 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են «Տաթև», «Սպանդարյան», «Շամբ» ՀԷԿ-երի հրդեհային ազդանշանային համակարգի տեղադրման, «Շամբ» ՀԷԿ-ի հրդեհային լողավազանի և ջրամատակարարման համակարգի կառուցման նախագծային աշխատանքների, «Սպանդարյան» ՀԷԿ-ի հրդեհային լողավազանի եւ ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներին: Վերոհիշյալ աշխատանքները մնացել են անավարտ:

«Ջրային միջավայրի ելակետային ուսումնասիրություն» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 133,5 մլն դրամ: Այս աշխատանքների նպատակն է՝ ստանալ տվյալներ, որոնք կնկարագրեն ՀԷԿ-երի աշխատանքի ազդեցությունը ջրային միջավայրի, ձկնատեսակների պոպուլիացիայի, ինչպես

նաև Որոտան գետի էկոլոգայի վրա: Այս ուղղությամբ իրականացվել են 8,5 մլն դրամի աշխատանքներ, որոնք մնացել են անավարտ:

3.4 Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման

Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 200,9 մլն դրամ՝ ընկերության «Սպանդարյան», «Շամբ» և «Տաթև» հիդրոէլեկտրակայաններում, որն ուղղված էր լրացուցիչ պաշտպանության ներդրմանը՝ դրանով իսկ ապահովելով աշխատանքի անվտանգությունն և շարունակականությունը: Այս ուղղությամբ իրականացվել են 200,4 մլն դրամի աշխատանքներ, որոնք մնացել են անավարտ: 2018 թվականի հաշվետվության համաձայն «Տաթև» ՀԷԿ-ում լրացուցիչ պաշտպանության սարքերի ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել, սակայն 2019 թվականի հաշվետվության համաձայն հաշվետու տարվա սկզբի դրությամբ մնացորդը կազմում է 100,9 մլն դրամ: Նշվածը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:

3.5 Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ընկերության ՀԷԿ-երի հետագա անվտանգ և անխափան աշխատանքի ապահովման, ինչպես նաև ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման նպատակով 2019 թվականին համաձայնեցված էր 601,6 մլն դրամ՝ Գորիսի գրասենյակի ճարտարապետաշինարարական հետազոտման և նախագծման, «Շամբ» ՀԷԿ-ի տանիքի նախագծային աշխատանքների և հիմնանորոգման, Տոլորսի ջրամբարի ոռոգման շենքի, «Շամբ» ՀԷԿ-ի սպասարկող անձնակազմի սենյակի, «Շամբ» և «Սպանդարյան» ՀԷԿ-երի 2-րդ պահակակետերի, «Սպանդարյան» ջրամբարի սարքավորումների, ճնշումային խողովակաշարի հիմնանորոգման, գնդային փականի վերականգնման, սարքավորումների

փոխարինման, «Տաթև» ՕԿՋ-ի համար խմելու ջրի ջրագծի նախագծման և կառուցման, ինչպես նաև համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների, անվտանգության պարագաների և հատուկ մեքենաների ձեռքբերման նպատակով:

«Գորիսի գրասենյակի ճարտարապետաշինարարական հետազոտում և նախագծում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 12,0 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 1,8 մլն դրամ արժեքով նախագծային աշխատանքներ, որոնք մնացել են անավարտ:

«Շամբ ՀԷԿ-ի շենքի հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 42,8 մլն դրամ ներդրումներ, որով նախատեսված էր իրականացնել ՀԷԿ-ի սպասարկող անձնակազմի սենյակի, ՀԷԿ-ի 2-րդ պահակակետի, տանիքի նախագծային աշխատանքներ և հիմնանորոգում: Տանիքի նախագծային աշխատանքներին ուղվել է 0,9 մլն դրամ, որոնք մնացել են անավարտ: Իսկ ՀԷԿ-ի սպասարկող անձնակազմի սենյակի և 2-րդ պահակակետի աշխատանքների ուղղությամբ փաստացի իրականացվել են համապատասխանաբար 4,2 մլն և 2,5 մլն դրամ ներդրումներ: Այս ենթաուղղությամբ նախատեսված էր նաև Տոլորսի ջրամբարի ոռոգման շենքի հիմնանորոգումը, որի նպատակով աշխատանքներ չեն իրականացվել:

«Սպանդարյան ՀԷԿ-ի շենքի 2-րդ պահակակետի հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 2,3 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և ավարտվել են 1,6 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«Սպանդարյան ջրամբարի սարքավորումների հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 108,7 մլն դրամ ներդրումներ, որոնց իրականացման նպատակն էր ճնշումային թունելի խորքային ջրթափի բարձրացման հիդրավլիկ համակարգի, խողովակաշարի սկավառակային փականի և սկավառակային փականի շենքի, Սպանդարյանի ջրամբարի տրանսֆորմատորային ենթակայանի շենքի հիմնանորոգումը և Անգեղակոթ ջրավազանի պարապ ջրթափի երեսպատումը: Վերջինիս ուղղությամբ իրականացվել է 5,7 մլն դրամ ներդրումներ, որոնք մնացել են

անավարտ: Վերը նշված ուղղությամբ փաստացի իրականացվել և ավարտվել են ՀԷԿ-ի սկավառակային փականի շենքի և Սպանդարյանի ջրամբարի տրանսֆորմատորային ենթակայանի շենքի հիմնանորոգման աշխատանքները, համապատասխանաբար՝ 11,8 մլն և 6,7 մլն դրամ արժեքով:

«Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 96,0 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել է 2,1 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«Սպանդարյան ՀԷԿ-ի գնդային փականի վերականգնում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 201,4 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և ավարտվել են 161,2 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«Չափիչ սարքերի և գործիքներ ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 7,5 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 5,0 մլն դրամ արժեքով մոբայլ սարքավորումներ շրջայցի համար և 1,8 մլն դրամ արժեքով սահմանափակ տարածքների համար փրկարարական միջոցներ:

«Անվտանգության պարագաների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 15,2 մլն դրամ ներդրումներ: Ընկերության մի շարք փակ տարածքներում աշխատակիցների անվտանգության պահանջները բարելավելու նպատակով ձեռք են բերվել 6,0 մլն դրամ արժեքով շնչառական ապարատներ: Ընկերության պատվարների և հարակից տարածքների անվտանգության բարձրացման նպատակով համաձայնեցված էր 5,5 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել տեսախցիկներ՝ 6,9 մլն դրամ արժեքով:

«Հատուկ մեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 40,0 մլն դրամ ներդրումներ: Ընկերության գրունտային ճանապարհների և սեզոնայնությունից կախված այդ ճանապարհները վերականգնելու և քարաթափումներից մաքրելու անհրաժեշտությունից ելնելով ձեռք է բերվել էքսկավատոր՝ 38 մլն դրամ արժեքով:

«Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 36,0 մլն դրամ՝ բջջային, IP հեռախոսների, համակարգիչների և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 24,6 մլն դրամի հիմնական միջոցներ:

Մյուս ենթաուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2019 թվականի ընթացքում Ընկերության կողմից փաստացի ավարտված 349,6 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. «Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» ենթաուղղությամբ համաձայնեցված բազմաֆունկցիոնալ տպող սարքավորման վերաբերյալ ներկայացված սկզբնական փաստաթղթերի, ինչպես նաև փաստացի իրականացված գնումների վերաբերյալ 2019 թվականի տարեկան հաշվետվության ուսումնասիրության արդյունքում 4,2 մլն դրամ ծավալով ներդրումները նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
2. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, ընկերության կողմից իրականացված ձեռքբերումների և աշխատանքների ծավալը

հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցել է 35,4 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից հետևյալ ենթաուղղություններով.

- «Տաթև», «Շամբ», «Սպանդարյան» ՀԷԿ-երում կոյուղաջրերի մաքրման տեղային կայանների ստեղծում՝ 32,2 մլն դրամ,
- համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 1,8 մլն դրամ,
- չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերում՝ 1,4 մլն դրամ:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2019 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի սակագնով փոխհատուցման ենթակա 2019 թվականի ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը

մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**1 109,4**
2	**Անավարտ աշխատանքներ**	**759,8**
3	**2019 թվականի ընթացքում շահագործման հանձնված աշխատանքներ**	**349,6**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**44,2**
4.1	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	4,2
4.1.1	Սկզբնական փաստաթղթերի (կատարողական ակտերի) ուսումնասիրության արդյունքում	4,2
4.2	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	35,4
5	**2019 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**310,0**

Եզրակացություններ

Ամփոփելով Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2019 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 13%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավարտված ներդրումների ծավալը կազմել է 349,6 մլն դրամ:

Համաձայն վերլուծության արդյունքների, իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 310,0 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պատվարների և դրանց հիմնատակերի լրացուցիչ երկրաֆիզիկական ուսումնասիրություններին և ամրապնդման աշխատանքների նախագծային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմման և հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման ուղղությամբ ներդրումները իրականացվել են մասնակի:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №470Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 26-ի №228Ա որոշումը «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2019-2021 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Հաշվետվություն -	«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2020 թվականի մայիսի 11-ի №0123-2020 գրությամբ ներկայացված հաշվետվությունը: